

տակ յոյն առեւտրականները շատ ալ ասպարէզդ չէին ձգեր ուրիշ տարրերու :

Ասկէ զատ մինչ Մոլտովայի հայերը աւելի ընդարձակ հեռանկարներ ունէին իրենց առեւտուրին համար, ու Լեհաստան, Աւստրիա, մինչեւ Գերմանիա կը տարածէին իրենց առեւտուրը՝ թէ՛ ներածութիւն եւ թէ՛ արտածում ընելով, Պուրքէշի հայ առեւտրականները կապ ունէին աւելի յետամնաց երկիրներու՝ ինչպէս Պուլկարիոյ եւ Թուրքիոյ հետ, ուրկէ ներածուելիք գրեթէ բան մը չկար :

Պուրքէշի շրջանին մէջ հայոց գլխաւոր զբաղումը, մինչեւ ասկէ կէս դար առաջ, ծխավաճառութիւնն է եղած : Բայց երբ պետական մենաշնորհի վերածուեցաւ ծխախոտի առեւտուրը՝ հայերը քուլեցան այս ասպարէզէն, նոյնիսկ ահաւոր կորուստներու մասնուելով :

Վալաքիոյ հայերուն մէջ ի սկզբան սեղանաւորներ ալ կային : Ասոնք աւելի զբաղական միջնորդներ էին՝ որոնք կը դիւրացնէին իշխաններուն կնքած փոխառութիւնները : Ձէնէրցի յոյները որոնք օրուան վէճերնեքէն դըրամով կը գնէին Վալաքիոյ կամ Մոլտովայի գահերը՝ ուրիշ նպատակ չունենալով բայց եթէ Ռումանիա գալ ու ետ դառնալ հարստացած, ստիպուած էին նման միջնորդներ պահել նախ ժամ առաջ հատուցանելու համար վէճերներուն իրենց խոստացած դումարը, եւ յետոյ հրապարակէն դրամ հայթայթելու իրենց սեփական գանձին համար, մանաւանդ որ գիտէին թէ կարճ պիտի տեւէր իրենց իշխանութիւնը, ու վէճերները իրենց յաջորդութիւնը ուրիշներուն պիտի վաճառէին շուտ մը :

Ռումէն Ակադեմիոյ ձեռագիրներուն մէջ յուշատետրը զտայ Պօղոս Սեբաստեան անուն հայու մը, որ Վալաքիոյ իշխան կարգուած Բօսթանթին Իփսիլանթի պէյին հետ եկեր էր Պուրքէշ՝ իբրեւ իշխանին զբաղական միջնորդ ու գործակատար : «1802 Սեպտեմբերի վերջերը, կը պատմէ Սեբաստեան, հասի ի Ռուսոնք առ ի փոխ զբամս խնդրել ի Թերսէնէքի օղլու Իսմայիլ աղայէն ի դիմաց Ուլահու պէյին իմոյ, Բօսթանթին Իփսիլանթի պէյին» :

Բայց իբրեւ զբաղական գործառնութեանց մեծագոյն միջնորդ կը յիշուի Ռուսոնքի Մա-

նուկ պէյ Միրզայեանը՝ որ ատեն մը մեծագոյն առեւտրականն էր բոլոր այս շրջաններուն :

ՊԵՍԱՐԱՊԻՈՅ ՄԷՁ

Քիչնէվի հայերը ունէին տէսիաթինի մենաշնորհը (տասը կտորին մէկ լէյ), ճիշդ այնպէս ինչպէս Եաշի ուսմէններն ու հայերը՝ ուրիշ տոնավաճառներու մէջ, եւ այս մենաշնորհով Բօսթանթին վտա Մավրօքօրտաթօ ճանչցաւ որ «բոլոր տոնավաճառները կը բացուին անոնց ալըշ-վէրիշներուն» : (Documentela Callimaki, հատոր I, էջ 517-518, 546. հատոր II. էջ 81-82. Եօռկա, Studii Si Documente, հատոր VI, էջ 366-7, հատոր VII, էջ 86187, հատոր XXI, էջ 111, 116-119) :

ԹՐԱՆՍԻԼՎԱՆՈՅ ՄԷՁ

Հայերը Թրանսիլվանիոյ մէջ եւս զբաղեցան առեւտուրով եւ արհեստներով :

Հայր Գովրիկեան կ'ըսէ թէ Թրանսիլվանիա դաղթող 3000 հայ ընտանիքը իր մէջ կը համրէր բազմաթիւ արհեստաւորներ : Բայց մանաւանդ վաճառականներ կային անոնց մէջ, որոնք ոչ միայն առեւտուրը ծաղկեցուցին տեղւոյն վրայ այլ նաեւ յարաբերութեան մտան օտար շուկաներու հետ, ուր հում նիւթ կը տանէին եւ կը ներածէին գործուած ապրանք :

Ու արդէն իրենց այս «չնորհ»ին համար էր որ գրկաբաց ընդունուեցան Թրանսիլվանիա՝ հունգար իշխաններուն կողմէ :

Թրանսիլվանիոյ Միքայէլ Արաֆի իշխանը 1680 Հոկտ. 26-ին հետեւեալ հրովարտակը կուտար .

«Միքայէլ Արաֆի չնորհօքն Աստուծոյ իշխան Գրանսիլվանիոյ, տէր հունգարական մասին, եւայլն : Մեր յարգելի ստորադասներուն խնդրանքը լսելով, թէ Դուրտա գաւառին Քէզէլէ անուն գիւղին մէջ բնակութիւն հաստատող հայ վաճառականներուն թոյլ տրուի, որ մեր պետութեան մէջ ամէն տեղ, ամէն քաղաք ու տոնավաճառ՝ իրենց արուեստին համեմատ յարգարուած կաշեղէն ծախեն, և ուրիշ տեսակ ապրանքներով եւ արջառով վաճառականութիւն կարենան ընել... ուստի գթածարար եւ ծանրապէս կը հրամայենք մեր ամէն կարգի հպատակներուն, որպէսզի վերոյիշեալ հայոց նկատմամբ մեր ցոյց տուած գթութիւնը լաւ